

Քաղվածք

«Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի՝ 2017թ. հոկտեմբերի 26-ին տեղի ունեցած թիվ 7 նիստի արձանագրությունից:

Նիստին գիտխորհրդի 40 անդամներից մասնակցում էին 35-ը, բացակայում էին 5-ը:

Նիստը նախագահում էր գիտական խորհրդի նախագահ Գուրգեն Խաչատրյանը:

Օրակարգ

Լսեցին՝ 4. Թերլրվող կուրսերի կրթական գործընթացի կազմակերպման խնդիրները, մարտահրավերներ և ռեսուրսներ:

Ձեկ.՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս.Թումանյան, համալսարանի գլխավոր հաշվապահ Գ.Բաղդասարյան

Առաջարկվեց՝ զեկուցումը "Թերլրվող կուրսերի կրթական գործընթացի կազմակերպման խնդիրները, մարտահրավերներ և ռեսուրսներ" վերաբերյալ ընդունել ի գիտություն:

Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին և դեկաններին.

1. Համաձայն ՀՀ ԿնԳ նախարարության կողմից հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման» օրինակելի կարգի՝ գործող ուսումնական պլաններում առ 01.12.17թ. կատարել փոփոխություններ.

ա) առկա ուսուցման համակարգի ուսումնական պլաններում կատարել ժամաքանակի փոփոխություն՝ ուսանողի շաբաթական բեռնվածքը հասցնելով 23-24 ժամի (առանց մարմնակրթությանը հատկացված ժամաքանակի)

բ) Մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի ուսումնական պլաններում կատարել ժամաքանակի փոփոխություն՝ ուսանողի շաբաթական բեռնվածքը հասցնելով 15-16 ժամի:

գ) հեռակա ուսուցման համակարգի ուսումնական պլաններում կատարել ժամաքանակի փոփոխություն՝ հաստատված բեռնվածքը հասցնելով 160-170 ժամի:

2. «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան հիմնադրամի պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների կարգ»-ում կատարել փոփոխություն՝ գործնականի խմբերի ուսանողների թվաքանակը սահմանելով 25:

3. **Հանձնարարել բոլոր օղակներին.** մինչև 2017 թ. դեկտեմբերի 30-ը ուսումնասիրել ռիսկայնությունը և հաստիքների համար տալ առաջարկ (բոլոր օղակներում):

4. **Հանձնարարել հաշվապահությանը.** կատարել հետազոտություն և տալ հիմնավորված առաջարկ 2018թ. բյուջեի բոլոր հոդվածներով կրճատումներ (2017թ. համեմատությամբ) կատարելու համար (տոկոսային հարաբերությամբ):

5. **Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին.** մշակել ամբիոնների պրոֆեսորադասախոսական հաստիքների տեղակալման կարգ՝ սահմանելով ամբիոնի կողմից օգտագործվելիք յուրաքանչյուր հաստիքի սահմանային թիվը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ. կողմ՝ 35, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ

Զեկուցումը "Թերլրվող կուրսերի կրթական գործընթացի կազմակերպման խնդիրները, մարտահրավերներ և ռեսուրսներ" վերաբերյալ ընդունելի գիտություն:

Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին և դեկաններին.

1. Համաձայն ՀՀ ԿնԳ նախարարության կողմից հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման» օրինակելի կարգի՝ գործող ուսումնական պլաններում առ 01.12.17թ. կատարել փոփոխություններ.

ա) առկա ուսուցման համակարգի ուսումնական պլաններում կատարել ժամաքանակի փոփոխություն՝ ուսանողի շաբաթական բեռնվածքը հասցնելով 23-24 ժամի (առանց մարմնակրթությանը հատկացված ժամաքանակի)

բ) Մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի ուսումնական պլաններում կատարել ժամաքանակի փոփոխություն՝ ուսանողի շաբաթական բեռնվածքը հասցնելով 15-16 ժամի:

գ) հեռակա ուսուցման համակարգի ուսումնական պլաններում կատարել ժամաքանակի փոփոխություն՝ հաստատված բեռնվածքը հասցնելով 160-170 ժամի:

2. («Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների կարգ»-ում կատարել փոփոխություն՝ գործնականի խմբերի ուսանողների թվաքանակը սահմանելով 25:

3. ***Հանձնարարել բոլոր օղակներին.*** մինչև 2017 թ. դեկտեմբերի 30-ը ուսումնասիրել ռիսկայնությունը և հաստիքների համար տալ առաջարկ (բոլոր օղակներում):

4. ***Հանձնարարել հաշվապահությանը.*** կատարել հետազոտություն և տալ հիմնավորված առաջարկ 2018թ. բյուջեի բոլոր հոդվածներով կրճատումներ (2017թ. համեմատությամբ) կատարելու համար (տոկոսային հարաբերությամբ):

5. ***Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին.***

մշակել ամբիոնների պրոֆեսորադասախոսական հաստիքների տեղակալման կարգ՝ սահմանելով ամբիոնի կողմից օգտագործվելիք յուրաքանչյուր հաստիքի սահմանային թիվը:

Նիստի նախագահ

Գ. Խաչատրյան

Իսկականի հետ ճիշտ է.

Գիտքարտուղար

Ս. Բեժանյան